# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք**

**11.07.2025թ.**

2025 թվականի հուլիսի 11-ին ժամը 12:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի նիստերի դահլիճում /գ. Փամբակ 1 փող 23շ./ տեղի ունեցավ «ՀԷՑ» ՓԲԸ Ներդրումային ծրագրի շրջանակներում «110/35/10ԿՎ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110ԿՎ «Ստեփանավան-2» օդային գծով» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային լսում:

*Մասնակցեցին՝*

Փամբակ համայնքի ղեկավարի տեղակալ Մուշեղ Գիգորյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Սամսոն ՈՒլիխանյանը, «ՀԷՑ» ՓԲԸ-ի գլխավոր բնապահպան Կարինե Մովսիսյանը, անկախ փորձագետ Արամ Գալոյանը, Փամբակի համայնքապետարանի ներկայացուցիչները և բնակիչները:

*Զեկուցումներ՝*

Բացման խոսքով հանդես եկավ Փամբակ համայնքի ղեկավարի տեղակալ Մուշեղ Գրիգորյանը.

Հարգելի հյուրեր, բնակիչներ, ողջունում եմ բոլորիդ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից լիազորված «Վոլիոս նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ն /լիազորագիր N ԱԾ-01/24, տրված 13.12.2024թ-ին/ 29.05.2025թ-ի թիվ ՎՆ-090 գրությամբ դիմել է Փաբակ համայնքի ղեկավարին՝ «ՀԷՑ» ՓԲԸ Ներդրումային ծրագրի շրջանակներում «110/35/10ԿՎ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110ԿՎ «Ստեփանավան-2» օդային գծով» նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային լսումներ կազմակերպելու խնդրանքով: Համայնքն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով կազմակերպել է հանրային լսումներ և ապահովել է լսման վերաբերյալ բնակիչների ծանուցումը: Նախատեսվող գործողության մասին ավելի մանրամասն և մասնագիտորեն կներկայացնեն և ձեր հարցերին կպատասխանեն ընկերության ներկայացուցիչները:

Ելույթ ունեցավ «ՀԷՑ» ՓԲԸ-ի գլխավոր բնապահպան Կարինե Մովսիսյանը.

- Բարև Ձեզ, ինչպես նշեց համանքի ղեկավարի տեղակալը հանրային լսումն անց է կացվում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ Ներդրումային ծրագրի շրջանակներում «110/35/10ԿՎ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 110ԿՎ «Ստեփանավան-2» օդային գծով» նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման նպատակով: Նշեմ, որ օդային գիծն անցնելու է Փամբակ համայնքի Բազում բնակավայրի վարչական տարածքով՝ 11 կմ ՕԳ (որից 4,7կմ անցնելու է գոյություն ունեցող հենարաններով, իսկ 6,3կմ-ը՝ նոր տեղադրվող հենարաններով): Նոր հենասյուների տեղադրման աշխատանքներն իրականացվելու են տեղային փորման ձևով և ձեռնարկվելու են համապատասխան միջոցներ շրջական միջավայրի վրա ազդեցության ռիսկերը մինիմալին հասցնելու ուղղությամբ:

Օդային գծի կառուցումը կապահովի ենթակայանների երկրորդ սնուցումը, ինչպես նաև Լոռու մարզի թվով 6 համայնքների և ագաբնակչության էլեկտրամատակարարման որակի բարելավումը, հուսալիության բարձրացումը և անջատումներից խուսափումը:

Հարց հնչեցրեց Մ. Գրիգորյանը.

- Օդային գիծը Բազում բնակավայրի բնակելի տարածքով է անցնելու՞, թ՞է դաշտամիջյան հատվածով:

Պատասխանեց «ՀԷՑ» ՓԲԸ-ի գլխավոր բնապահպան Կարինե Մովսիսյանը.

- Օդային գիծն անցնելու է դաշտամիջյան հատվածներով, բնակելի տարածքից հեռավորության վրա:

Հարց հնչեցրեց Հասմիկ Մացակյանը.

- Նոր տեղադրվող սյուները ու՞մ տարածքներով են անցնելու: Արդյո՞ք սեփականատիրոջ տարածքով անցնելու պարագայում նրանք կփոխհատուցվեն:

Պատասխանեց «ՀԷՑ» ՓԲԸ-ի գլխավոր բնապահպան Կարինե Մովսիսյանը.

- Դեռևս ուղեգիծը հստակեցված չէ, թէ համայնքային, թէ անհատի սեփականության դեպքում նախապես պետք է ստանանք սեփականատիրոջ համաձայնությունը, անհրաժեշտության դեպքում կկնքվեն նաև փոխհատուցման պայմանագրեր:

Հարց հնչեցրեց Ռաիսա Մինասյանը.

- Ի՞նչ եղանակով են իրականացվելու աշխատանքները և ի՞նչ քայլեր են ձեռնարկվելու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ:

Պատասխանեց անկախ փորձագետ Արամ Գալոյանը.

- Հենասյուների տեղադրման աշխատանքներն իրականացվելու են տեղային փորման միջոցով, իսկ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը /փոշու արտանետումների առումով/, ջրման միջոցով փորձելու ենք հասցնել մինիմալի:

Տեղի ունեցան այլ քննարկումներ, լսման ներկաները տվեցին հավանություն նախատեսվող գործողությանը:

Հանրային լսման վարող,

Փամբակ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մ. Գրիգորյան

«ՀԷՑ» ՓԲԸ-ի գլխավոր բնապահպան՝ Կարինե Մովսիսյանը

Անկախ փորձագետ՝ Արամ Գալոյան

Հանրային լսման արձանագրող՝ Ռ. Մինասյան